Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝1810 , Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

№ԼՄ/Լ$\lt$025/ 19

«22» 01 2019 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ա. Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի թիվ 03, 04, 05 և համայնքի ավագանու թիվ 01-Ա, 02-Ն որոշումները:

Առդիր 6 թերթ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«21» 01 2019թ.

հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 01-Ա

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2019թ. հունվարի 21-ի նիստի օրակարգը.

## ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2019թ-ի հունվարի 21-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 26-ի << Լեռնանցք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 51-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | [signature] | | |
| Մանուկյան Է. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Չախոյան Ա. | [signature] | | |
| Վարդանյան Ս. | [signature] | | |
| Վիրաբյան Կ. | [signature] | | |
| Օհանյան Յ. | [signature] | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ [signature] Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 01 2019թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 02-Ն

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -Ի <<ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 51 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ կետով և 33-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնանցք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի << Լեռնանցք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 51-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«17» 01 2019թ. հեռ. 093-32-22-39

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 03

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<հողային օրենսգրքի>> 97-րդ հոդվածի Հայաստանի կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի ավագանու 2011 թվականի հունիսի 14-ի N 10 որոշումը՝ համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող 3.15 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից (ծածկագիր՝ 06-040-0030-001-ից) սույն որոշմանը կից հողամասի հատակագծի համաձայն առանձնացնել որպես անշարժ գույքի առանձին գույքային միավոր:
2. Առանձնացված 0.1264 հա հողատարածքի գործառնական նշանակությունը համայնքի գլխավոր հատակագծի համաձայն հասարակական կառուցապատման հողերից փոփոխել բնակավայրերի նշանակության հողերի:

3. 0.1264 հա հողին տալ հասցե 8 փող. թիվ 7/1։

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից և ենթակա է պետական գրանցման։

Լեռնանցքի համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«17» 01 2019թ.

հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 04

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի

- 0.22883 հա ընդհանուր մակերեսով (ծածկագիր 06-040-0204-0098) նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, փոխադրել 4-րդ կարգի անջրդի վարելահող գործառնական նշանակության:
- 0.35321 հա ընդհանուր մակերեսով (ծածկագիր 06-040-0204-0099) նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, փոխադրել 4-րդ կարգի անջրդի վարելահող գործառնական նշանակության:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«21» 01 2019թ. հեռ 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 05

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Լեռնանցք համայնքի ավագանու 21.01.2019 թվականի «Լեռնանցք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշմամբ՝ հաստատել Լեռնանցք համայնքի 2019թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելված 1 և 2-ի:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան